ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ **64**

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

24-ը դեկտեմբերի 2022թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը, որից 3-ը ZOOM հարթակի միջոցով:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը: Ա. Մակարյանը նշեց, որ «ԵՊՀ ԻՄ 2017-2022թթ. գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների ներկայացում» հարցը տեղափոխվել է նախորդ նիստից, իսկ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2023-2026թթ. համալիր միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» հարցը առաջարկեց տեղափոխել հաջորդ նիստ. ձևավորել հանձնաժողով, որը առավել մանրակրկիտ կուսումնասիրի ծրագիրը և կներկայացնի հաստատման:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2021-2022թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն:

   / Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրեն **Ա. Մակարյան** /

2. ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին:

   / Զեկուցող ԵՊՀ ԻՄ Գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան** /

3. ԵՊՀ ԻՄ 2017-2022թթ. գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների ներկայացում:

   / Զեկուցող ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան** /

4. **Ընթացիկ հարցեր**

4.1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին:

/Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան/**

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u> **՝** «ԵՊՀ ԻՄ-ի 2021-2022թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Մասնավորապես նշվեց, որ ԵՊՀ ԻՄ-ը տարածաշրջանում պահանջված բարձրագույն ուսումնական հաստատություն է և ունի դիմորդների կայուն հոսք: Ըստ կրթական աստիճանների և ուղղությունների՝ 2021թ. Մասնաճյուղն ունեցել է 394 դիմորդ, որը վերջին տարիների համար գրեթե կայուն ցուցանիշ է, այդ թվում առկա բակալավրիատում՝ 242, հեռակա բակալավրիատում՝ 135 և հեռակա մագիստրատուրայում՝ 17: Առկա ուսուցման դիմորդների 96.3%-ը Տավուշի մարզից է, ինչը պայմանավորված է մարզի հասարակության շրջանում Մասնաճյուղի ունեցած բարձր հեղինակությամբ և վարկանիշով: Ընդունելության քննությունները հաղթահարել է դիմորդների 81%-ը, որը բավականին լավ ցուցանիշ է, ընդ որում՝ առկա ուսուցմամբ բակալավրիատ ընդունվել է դիմորդների 79.3%-ը (192-ը), հեռակա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների 83.7%-ը (113-ը), մագիստրատուրայի դիմորդների 88%-ը (15-ը):

Ա. Մակարյանը նշեց, որ 2021-2022 ուստարում Մասնաճյուղում սովորել է 1186 ուսանող (01.04.2022թ. դրությամբ, նախորդ ուստարում՝ 1288), այդ թվում առկա ուսուցմամբ՝ 562, որը կազմում է ուսանողական համակազմի 47.4%-ը, հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ 611 (51.5%-ը), մագիստրատուրայում՝ 13: 2021-2022 ուստարում ուսանողների թիվը նախորդ ուստարվա համեմատ նվազել է, ինչը պայմանավորված է հիմնականում հեռակա ուսուցման ընդունվածների ընդհանուր

թվի նվազմամբ՝ պայմանավորված ընդունելության պահանջների շարունակական խստացմամբ:

Նոր կրթական ծրագրեր ներդնելու և աշխատաշուկայի պահանջարկին համահունչ շարժվելու համար Մասնաճյուղը պարբերաբար իրականացնում է ՀՀ և առանձնապես Տավուշի մարզի աշխատաշուկայի ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Մասնաճյուղում վերջին տարիներին ներդրվել են բակալավրի 3 և մագիստրոսական 1 ծրագիր («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»): Արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունների և Տավուշի մարզի հասարակության շրջանում անցկացրած առցանց հարցման արդյունքների հիման վրա Մայր բուհի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի աջակցությամբ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել հեռակա ուսուցմամբ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի լիցենզավորման հայտ: Ստացվել է նախարարի դրական որոշումով հրամանը, և 2023թ. Մասնաճյուղը ընդունելություն կկատարի երկրորդ մագիստրոսական ծրագրով:

2021-2022 ուստարում իրականացվել են ուսումնական և վարչական տարածքների, մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման 14, օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործման 3 ծրագրեր, այդ թվում՝ արդիականացվել է 14 լսարան (57-ից), ՀՕՖ-ի աջակցությամբ 1 սրահի համար ձեռք է բերվել նոր կահույք և 20 գերժամանակակից համակարգիչ և ցուցասարք, սպորտդահլիճին կից կառուցվում են հանդերձարաններ, ամբողջությամբ վերանորոգվել և բարեկարգվել է հյուրատան խոհանոցային համալիրը, բարելավվել են նրա կոմունալ պայմանները: Վերանորոգվել և բարեկարգվել են Կիրառական արվեստի ֆակուլտետի քանդակի և կերամիկայի արվեստանոցները:

2021-2022 ուստարում Մասնաճյուղում ընդհանուր առմամբ դասավանդել է 173 դասախոս, այդ թվում՝ 90-ը հիմնական և ԵՊՀ-ից հրավիրված, 26-ը՝ համատեղությամբ և 57-ը՝ ժամավճարային հիմունքներով: Հիմնական դասախոսական կազմի 59%-ը (90-ից 53-ը) ունի գիտական աստիճան, այդ թվում Մասնաճյուղում դասավանդում են 6 պրոֆեսոր:

Խնայողությունների հաշվին ձևավորված 700 մլն. դրամի հավասար ֆինանսական ապահովության բարձիկը մնացել է անձեռնմխելի և վստահություն է տալիս գործընթացների պլանավորման հարցում:

2021թ. Մասնաճյուղում տարեկան բյուջեն 2020թ. համեմատ աճել է 12.2%-ով: 2021թ. տարեկան բյուջեի 47%-ը կազմել են վճարովի ուսուցման ծառայության եկամուտները, իսկ ահա ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռել են աշխատանքի վարձատրության ծախսերը՝ 68%: Չնայած 2022թ. հունվարից 10%-ով բարձրացել է դասախոսների աշխատավարձը, դեռևս վարչակառավարչական, տնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի համար նախատեսված գումարները հավասար են պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի հոդվածով նախատեսված գումարներին, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել հաստիքների օպտիմալացում՝ մասնավորապես այս տարի ԵՊՀ գիտական խորհրդում ընդունվել է մեր առաջարկը ԵՊՀ ԻՄ արտաքին կապերի բաժինը լուծարելու մասին (ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ ք.գ.դ, պրոֆ., Ալեքսանդր Մարգարովը պնդում էր, որ Մասնաճյուղը չունի իրավունք նման գործունեությամբ զբաղվելու), իսկ բաժնի հաստիքները վերադարձվել են այն ստորաբաժանումներ, որտեղից որ բերվել էին բաժինը ձևավորելու ժամանակ:

Ուսումնական ծախսերը 2021թ. կազմել են 48.8%, որը վերջին 5 տարիների համար ամենաբարձր ցուցանիշն է:

Ուսանողների, դասախոսների և աշխատակիցների համար տեղեկատվության և անհրաժեշտ մասնագիտական և գեղարվեստական գրականության ձեռքբերման լայն հնարավորություններ է տրամադրում գրադարանը Մասնաճյուղում: Հաշվետու ուստարում գրադարանը գնման կամ նվիրատվության արդյունքում համալրվել է 775 անուն հրատարակություններով. այդ թվում՝ դասագրքեր, գիտական գրականություն, քարտեզներ, ամսագրեր և այլն: Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանն ազատ և մատչելի տարբերակով առաջարկում է 1054 էլեկտրոնային գիրք: Կարևոր ձեռքբերում է նաև գրադարանում «KOHA» համակարգի գործարկումը: Ամբողջական էլեկտրոնային սպասարկման համար համակարգ են մուտքագրվել և էլքարտարանում հասանելի է առկա 20.353 գրականության կեսը:

ԵՊՀ գրադարանի աշխատակիցների կողմից իրականացվել է ԵՊՀ առցանց քարտարանում բացակա շուրջ 1000 անուն գրքի մուտքագրում:

Միայն 2021թ. մասնաճյուղը ձեռք է բերել 621.000 դրամի գրականություն, որը 3.8 անգամ գերազանցել է նախորդ տարվա ծախսերը և վերջին 4 տարիների ամենաբարձր ցուցանիշն է:

2021-2022 ուստարում Մասնաճյուղում հիմնական դասախոսական կազմի կողմից հրատարակվել են 2 մենագրություն, 4 ուսումնական ձեռնարկ և 42 գիտական հոդված, ինչը նախորդ տարվա համեմատ 61%-ով ավել է: Հրատարակությունների թվի աճը մենք նաև պայմանավորում ենք Մասնաճյուղում ներդրված խրախուսման մեխանիզմներով՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի՝ 2022 թվականի մարտին վերանայված «Երևանի պետական համալսարանի Իջևանի Մասնաճյուղում աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի հետևողական կիրարկմամբ և գիտական կոչումներով պայմանավորված աշխատավարձերի տարբերակմամբ:

Որպես տարածաշրջանային ուսումնական հաստատություն Մասնաճյուղը կարևորում է կազմակերպությունների և տարբեր շահակիցների հետ մարզային, հանրապետական և միջազգային մակարդակներում փոխհամագործակցությունը: Մասնաճյուղն ակտիվորեն ներգրավված է Տավուշի մարզում տեղի ունեցող գրեթե բոլոր միջոցառումներում և հանդիպումներում:

ԵՊՀ ԻՄ-ը հուշագրերի ու պայմանագրերի շրջանակներում համագործակցել է մարզային մակարդակով 10, հանրապետական մակարդակով 10 և միջազգային մակարդակով 4 բուհերի և կազմակերպությունների հետ, որոնցից 11-ը ստորագրվել է 2021-2022 ուստարում:

Ուսանողների արտալսարանային կյանքը եղել է բավականին հագեցած և բովանդակալից: Ուսանողական կառույցների հետ համատեղ ուսանողների ստեղծագործ մտքերի և ցանկությունների դրսևորման, տոնական միջոցառումների կազմակերպման հաճելի միջավայր են ապահովել ֆակուլտետները, Մասնաճյուղում գործող լեզուների 3 կենտրոնները, գիտելիքի նորարարական հաբը, «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ը և գրադարանը:

Ուսանողները գրանցել են մի շարք հաջողություններ և՛ գիտության, և՛ կրթության, և՛ սպորտի բնագավառում: 2022թ. ապրիլին Ռուսաստանի Բ. Ն. Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարանում ասպիրանտների և ուսանողների համար տեղի է ունեցել «Լեզուն մասնագիտական հաղորդակցության ոլորտում» XXIV միջազգային գիտագործնական գիտաժողովը: Գիտաժողովի մրցութային փուլին իրենց գիտահետազոտական նախագծերով հանդես են եկել «Ռուսաց լեզու և գրականություն» ծրագրի 1-ին կուրսի 2 ուսանողներ, որոնք, հավաքելով ամենաշատ միավորներ, դիպլոմներ են ստացել «Լավագույն տեսական հետազոտություն» և «Լավագույն գործնական հետազոտություն» անվանակարգերում:

Մասնաճյուղի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի 1 ուսանող «2021 թվականի լավագույն ուսանող» անվանակարգում Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի կողմից արժանացել է դիպլոմի և մեդալի:

2021թ. հոկտեմբերին Հունաստանի Սալոնիկ քաղաքում կայացած սամբոյի աշխարհի պատանեկան ու երիտասարդական առաջնությունում Մասնաճյուղում ուսանողը նվաճել է արծաթե մեդալ:

Այնուհետև Ա. Մակարյանը նշեց, որ Մասնաճյուղի աշխատակազմը, գիտակցելով Մայր բուհի միակ մասնաճյուղը լինելու պատիվն ու մեծ պատասխանատվությունը և ստանալով ԵՊՀ-ի բազմակողմանի աջակցությունը, կշարունակի արդյունավետ լուծել իր առջև դրված խնդիրները՝ դառնալով տարածաշրջանի ուսումնագիտական եզակի կենտրոն:

Ա. Մակարյանի հաղորդումը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 1 ում:**

Արտահայտվեցին՝ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը:

Արտահայտվողները նշեցին որ ԵՊՀ ԻՄ-ը 2021-2022 ուստարում ունեցել է տպավորիչ հաջողություններ, որը պետք է արժանավույնս գնահատվի:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ի 2021-2022թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը» հարցի վերաբերյալ Ա. Մակարյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 1-ը դրամական միջոցների մուտքերը (եկամուտները) կազմում են 387,859.5 ՀՀ դրամ, իսկ ելքերը (ծախսերը)՝ 457,413.4 ՀՀ դրամ:

Եկամուտները հիմնականում գոյացել են վճարովի ուսուցման ծառայություններից (209,213.0 ՀՀ դրամ) և պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից (104,471.0 ՀՀ դրամ): Ծախսերի ամենամեծ հոդվածն է «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր»-ը, որոնք կազմում են 385,863.6 ՀՀ դրամ: Այնուհետև Մ. Մխիթարյանը մանրամասնեց կատարողականի մյուս առավել կարևոր տողերը: (Նախահաշվի կատարողականը կարող եք տեսնել **հավելված 2-ում**):

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի վերաբերյալ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ 2017-2022թթ. գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների ներկայացում» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ տնօրենի առաջարկությամբ գործունեության «գնահատման առանցքային ցուցանիշները» վերանվանվել են «գործունեության

արդյունքային ցուցանիշներ», քանի որ, ըստ էության, ցուցանիշների առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար:

Նշվեց, որ սույն վերլուծությունը կատարվել է 2021-2022 ուստարվա վերջում՝ ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացման արդյունքների վերլուծության շրջանակներում, ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան կառույցների մասնակցությամբ: 2017-2022 թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների լրակազմում ներկայացվում է վերջին 5 տարիներին գրանցած արդյունքները և դրանց դինամիկան ու փաստում Մասնաճյուղում ձեռքբերումների, ինչպես նաև խնդիրների մասին:

Մ. Ճաղարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը կազմելիս առանձնացվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտները՝ ընդունելություն և համակազմ, ուսումնական գործընթաց, ռեսուրսներ և կառավարում, ենթակառուցվածքներ, գիտություն և նորարարություն, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն, որակի ապահովում, հասարակական պատասխանատվություն: Փաստաթուղթն ընդգրկում է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած 91 ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների: Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ-ի և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԵՊՀ ԻՄ 2017-2022թթ. գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշները ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը:

Արտահայտվողները շնորհակալություն հայտնեցին Մ. Ճաղարյանին կատարված աշխատանքի համար, նշելով, որ կատարված վերլուծությունները խորն են և շատ օգտակար:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ 64/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «ԵՊՀ ԻՄ 2017-2022թթ. գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների ներկայացում» հարցի վերաբերյալ Մ.Ճաղարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. 2023 թվականից սկսած կիրառության մեջ դնել գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների վերախմբագրված համակազմը:

Ընթացիկ հարցեր:

4.1.Լսեցին ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ մրցույթի նպատակն է խրախուսել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող ուսանողների առաջադիմությունը և խթանել նրանց գիտական և հասարակական ակտիվությունը: Մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի բոլոր այն ուսանողները, ովքեր սովորել են առնվազն 4 կիսամյակ և ԵՊՀ ԻՄ-ի մագիստրատուրայի բոլոր այն ուսանողները, ովքեր սովորել են առնվազն 2 կիսամյակ, կազմակերպվում և անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակում:

Մ. Աթոյանը նշեց, որ սույն կարգը քննարկվել է նաև ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախորդ նիստում, որի ժամանակ եղել են տարբեր առաջարկներ, որոնք

բոլորը մանրամասն քննարկվել են աշխատանքային խմբի կողմից, և ներառվել են ներկայացվող նախագծում (տես հավելված 4)։

Մ. Աթոյանը նշեց նաև, որ եղել են կառուցողական լրացուցիչ առաջարկներ փոխտնօրեն Մ. Օթարյանի կողմից, որոնք նույնպես ներառվել են՝ մասանավորապես մրցույթի կազմակերպման ժամկետների հստակեցման, մասնակցության մինիմալ շեմի և տրվող միավորների հետ կապված։ Հանվել են նաև մասնակիցներին տրվող նշված առավելագույն միավորները։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլոք։

Արտահայտվողները կարևորեցին կատարված փոփոխությունները, որոնք առավել հստակեցրել են նախորդ նախագիծը, և առաջարկեցին հաստատել ներկայացված նախագիծը։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 64/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ